երիտասարդ ումն 1 ր., Լիսիցեանց 50 կ., Այվազեանց 1 ր., Ոչ ուսանողներ Գոստինցեան (աժտարխանցի) 10 ր., Գէորգ Շիշմանեանց 10 ր. Ընդամենը 46 ր. 30 կ.

Պատուական «Մշակի» խմբագրութեան ուղարկում ենք 46 ռուբլի, իսկ 30 կոպէկ գործ ենք դնում ճանապարհածախսի.

Ենգիբարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պարոն Թոխմախեանի դասախօսութեան ժամանակ ցոյց տուած հայկական կերպասները իրանց նուրբ գործուածքով, գեղեցիկ նկարներով և զուարդ գոյնով այնպիսի մեծ ներգործութիւն են արել չատերի վրա՝ որ այժմ ամենայն տեղ յայտնում են մեծ ցանկութիւն ուրախութեամբ հագնել դրանցից, եթէ հնարք լինի ձեռք բերել. խորհուրդ կը տայինք մեր տեղական վաճառականներին բանալ առանձին խանութ «հայկական ապրանքներ» անունով. Հաւատացնում ենք, որ մեծ քանակութեամբ կը տանեն հայկական ապրանքներ նոյն իսկ հեռաւոր գաւառներից. Այդպիսով նախ՝ կը չանվեն հայ վաճառականները, երկրորդ՝ Հայաստանի արդիւնագործութիւնը կենսականութիւն և գործադրութիւն ստանալով, խիստ կը զօրանայ և վերջապէս մեր գրամական հարստութիւնը Հայաստանում կը ժողովվի.

—

Լսում ենք, որ Ներսիսեան դպրանոցը այս վերջին տարիները խիստ մեծ ուշադրութիւն է դարձնում Հայաստանի ուսումնասիրութեան վրա և այդ նպատակով նշանակել է առանձին դասեր Հայաստանի աշխարհագրութեան համար թէ վերին և թէ ստորին դասարաններում. Այժմ էլ հիմնում է հայկական թանգարան, ուր պէտք է գտնվեն Հայաստանի ամէն տեղերի արդիւնաբերական և արդիւնագործական հարստութիւնները.

—

Այս տարի Ներսիսեան ուսումնարանի հոթերորդ դասատունը կրկին բացվում է. մանկավարժութեան համար հրաւիրված է պ. Բահաթրեանը, որ հռչակվեցաւ որպէս «երևելի մանկավարժ» ռուս լրագիրներում...

—

Լսում ենք, որ Վրաստանի և Խմէրէթի թեմական վերատեսուչ Գ. Բարխուդարեանը առաջիկայ սեպտեմբերից մուտք է անելու բոլոր հայ-ուսումնարաններում մտցնել Հայաստանի աշխարհագրութիւնը իբրև առանձին առարկայ և Դրա վրա առանձին ուշադրութիւն դարձնել. ափսոս որ այդպէս ուշ են հասկանում մերայինք Հայաստան ուսումնասիրելու հարցը, բայց լաւ է ուշ, քան երբէք.

—

ՇՈՒՇՈՒՑ, պ. Ս. Նազարեանց խնդրում է մեզ յայտնել հետեւեալը. «Լոյս տեսաւ մեր հրատարակութիւնների երրորդ գրքոյկը «Երկու Մանրավէպ» (Լրտես տղան և Մէլիւզինի ընծան), Ալֆոնս Դոդէի. Գինն է 15 կ. Հասցէն Шуша, Тиграну Назарянцъ.»

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. Անցան ամիսներ, դեռ տեղային դպրոցի հոգաբարձութեան ընտրութիւնը չէ վերջացած. Այսպիսով ոչ միայն դրպրոցը մնացել է անտէր, այլ ամենայն եկեղեցական կալուածներ, որ հոգաբարձութեան կառավարութեան ներքոյ էին, և որոնցից դպրոցը իւրաքանչիւր տարի հազարներով եկամուտ էր ստանում,—մնացել են առանց հսկողութեան. Մի քանի թուրք բէկեր արդէն սկսել են յիշեալ եկեղեցական կալուածների մասին դատ բաց անել և խնդիր են ներկայացրել, բայց թէ դպրոցի և թէ եկեղեցու իրաւունքները այդ կալուածքների վերաբերութեամբ պաշտպանող չը կայ. շատ հասկանալի է, որ թուրքերը կը վատակեն դատը. Նամակագիրը աւելացնում է, որ խռովութիւնների պատճառը տեղային յաջորդն է, որ ժողովրդի մէջ երկպառակութիւն սերմանելով, ամէն ինչ քանդում է.

—

Մեզ գրում են ՇՈՒՇՈՒՑ. Այս օրերում վախճանվեցաւ մի հարուստ վաճառական Ա. Խ. հոգեհանգստի օրը քելեխ տուեցին հանդուցեալի հոգու փրկութեան համար, որի վրա ծախսվեցաւ աւելի քան 2,000 ռուբլ. Աւելի լաւ կը լինէր այդ գումարը մի այլ բարեգործական նպատակի համար գործ դնէին.

—

ՇՈՒՇՈՒՑ գրում են մեզ, որ մի նշանաւոր կռիւ պատահեց մի խումբ թուրքերի և հայերի մէջ, որը կարող էր վտանգաւոր կերպարանք ստանալ, եթէ ոստիկանութիւնը չուտ վրա չը հասնէր.

—

Պ. Աբել Ապրեսեանցը ՇՈՒՇՈՒՑ խնդրում է մեզ յայտնել, որ նա ստանում է անդադար ծըրարներով 1 ր. Բաֆֆիի «Խենթը» վէպի համար, մինչդեռ նրա գինը 1 ր. 20 կ. է. եթէ մէկ ռուբլի ուղարկողները չը լրացնեն պակասորդը, նրանց գիրք չի ուղարկվի, կարող են իրանց փողը յետ ստանալ.

—

ՇՈՒՇՈՒՑ գրում են մեզ, որ այս տարի առատ անձրևներից յետոյ թէ ցորենի և թէ միւս բերքերը խիստ առատ են, բայց չերամի սերմերը մեծ մասամբ փչացան անձրևից. Այս տարի տեղային մետաքսը խիստ սակաւ կը լինի և բոժոները վատ.

—

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է «Մշակի» խմբագրատան մէջ, այլ և Թիֆլիսի հայ գրավաճառների մօտ Բաֆֆիի «ԴԱՒԻԹ-ԲԷԿ» անունով վէպի առաջին և երկրորդ մասերը միասին կազմված. Գիրքը բաղկանում է 440 երեսներից, տպված է մաքուր թղթի վրա. Գինն է 1 ր. 50.. «ԴԱՒԻԹ-ԲԷԿԻ» երրորդ մասը նոյնպէս լոյս կը տեսնի առանձին գրքով, երբ նրա տպագրութիւնը «Մշակի» մէջ աւարտված կը լինի, որովհետև «Մշակի» մէջ տպվելով, մի և նոյն ժամանակ առանձին բրօշիւր է կազմվում.

—

Այսօր, հինգշաբթի, յունիսի 11-ին պ. Ադամեան տալիս է Պալմի թատրոնում իր հրաժեշտի երեկոյթը. Երեկոյթը բաղկացած կը լինի երաժշտական և դրամատիկական երեք մասերից. Առաջին մաս. «Փարիզի աղքատներ» դրամայի առաջաբան. Երկրորդ մաս. երաժշտական և դրականութիւն. Երրորդ մաս. Շիլլերի «Աւազակների» չորրորդ գործողութիւնը. կը մասնակցեն. տիկին Զմշկեան, օրիորդ Պօպով, պ. պ. Զիժեան (որ կածէ ջութակի վրա), Լէարով, Զմշկեան, Աւալեանց և Տէր-Դաւթեանց. Սկիզբը 8 ժամին. Գները սովորական են.

—

Քաղաքում լուրեր են տարածված որ Թիֆլիսի սուրբ Նինայի օրիորդական դպրոցում և օրիորդական ինստիտուտի գանձարաններից բաւական մեծ գումարներ են վատնված. Այդ երկու հիմնարկութիւնների մէջ գանձապահը իշխան Սիդամօն Էրիստաւն է. Ասում են որ կորած գումարը հասնում է 120,000 ռուբլի.

—

Երևանի փոստատան կառավարչի նամակին, որ տպված էր նորերումս «Մշակի» մէջ, մենք կարող ենք պատասխանել հետեւեալը. Մեզ անհնարին է մատնացոյց անել փոստատան այն ծառայողների անունների վրա, որոնք իրանց սեփականացրել են լուսանկարներ և գրքեր, բայց հրաւիրում ենք մեր թղթակցին յայտնել թէ ովքեր են եղել, որոնք չին ստացել իրանց անունով ուղարկված նամակները, լուսանկարները և գրքերը.

—

Լսում ենք որ Թիֆլիսում հիմնվել է մի բաժանորդական ընկերութիւն դեղատան ապրանքները ծախելու. Ընկերութիւնը կը կրի «Դեղատան ապրանքներ ծախող կովկասեան ընկերութիւն» անունը. Ընկերութեան բաժանորդութիւնը արժէ 500 ռուբլ և բոլոր բաժինները արդէն վեր առած են, այնպէս որ ընկերութեան հիմնական դրամագլուխը հասնում է 150,000 ռուբլ գումարի. Ընկերութիւնը նպատակ ունի, երբ նրա գործերը կընդարձակվեն, բացի ապրանքների ծախելուց, ձեռք տալ և դեղատան նիւթերի տեղական արդիւնաբերութեանը. Չէ կարելի չը համակրել այդ տեսակ օգտաւէտ հիմնարկութեանը.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Կայսերական պարլամենտը, քննելով բանուորներին ապահովելու օրինագիծը, հաստատեց 12—42 յօդուածները. Նրանցից նշանաւորը 13-դ յօդուածն է, որ վերաբերում է ապահովական վարձատրութեանը. Պարլամենտը մերժեց այդ յօդուածի կառավարչական խմբագրութիւնը և ընդունեց մանաժողովի խմբագրութիւնը, որի համեմատ ապահովական վարձատրութեան $^2/_3$ վճարում է գործատէրը, իսկ $^1/_3$ գործաւորը. Վերջինի մասը կարելի է վճարել աղքատներին օգնող գանձարաններից. Այդ հարցի մասին վիճաբանութիւնների ժամանակ պարլամենտի սոցիալիստական կուսակցութեան անդամներից մէկը պաշտպանեց Աուերի առաջարկութիւնը, որի համեմատ ապահովական վարձատրութիւնը պէտք է ամբողջապէս գործատէրը վճարէ.

Ճառախօսը ասաց, որ ստիպել բանուորին վճարել վարձատրութեան մի մասը, կը նշանակէ խլել նրանից մի ձեռքով այն, ինչ-որ տրվում է միւսով. Բացի այդ, նրա կարծիքով, օրէնքը կատարեալ չէ, քանի որ բանուորների մի մասը ապահոված կը լինի, իսկ միւսը ոչ. „Եթէ այդ օրէնքը չէ վերաբերում բոլոր բանուորներին, ասաց նա, ուրեմն ո՞ւր է այն գործնական քրիստոնէական ոգին, որի մասին այստեղ խօսում էին. Ես օրինագծի մէջ տեսնում եմ մի ինքնուրոյն ոգի, որ մի քանի հարկատուներից դրամ է վերցնում և տալիս է նրանց, որոնք արտօնութիւն ունեն.“

Առաջադէմ Բիխտեր յարձակվում էր իշխան Բիսմարկի ամբողջ ներքին քաղաքականութեան վրա. Այն առաջարկութիւնը, որի համեմատ պետութիւնը պէտք է տայ բանուորին ապահովական վարձատրութեան մեծ մասը, Բիխտեր մի միջոց է համարում բանուորներին ստրկացնելու համար. „Այդպիսով, ասաց նա, մենք յետ կը դառնանք ոչ թէ 1848 թ., այլ 1808 թ., Ֆրիդրիխ-Մեծի ժամանակներին, երբ գիշերներով բռնում էին զինուորներին և երբ երկիրը կառավարվում էր տասնապետի փայտով.“ Մնացած յօդուածները վիճաբանութիւններ չը ծագեցրին. Բայխստագի նիստերը յետաձգված են մինչև յունիսի 9-ը. Ընտրողական շրջանը արդէն սկսվել է.

Գերմանիայի մէջ շատ են խօսում ներքին գործերի մինիստր Պուտկամերի վերջին շրջաբերականի մասին, որ խոստանում է համայնքներին ուսումնարաններից վերցնվող հարկերը փոքրացնել, եթէ կառավարութեան ձեռնարկած հարկային վերանորոգութիւնները կաջողվեն, այսինքն եթէ առաջիկայ ընտրութիւնների ժամանակ այնպիսի պատգամաւորներ կուղարկվեն բայխստագ, որոնք համակրում են իշխան Բիսմարկի քաղաքականութեանը. Այդ շրջաբերականով ընտրողական արշաւանք է բացվում առաջադէմների և ազգային-ազատամիտների դէմ. Կիսապաշտօնական լրագիրները մեղադրում են այդ երկու կուսակցութիւններին, իբր թէ նրանք դրդում են համբուրգ քաղաքին ընդդիմանալ կառավարութեանը.

ԱՆԳԼԻԱ

Յունիսի 5-ին Լօնդօնում Հայդ-պարկի մէջ կայացաւ իրլանդական ժողով, որ շատ բազմամարդ չէր անձրևի պատճառով. Այնու ամենայնիւ պարկի մէջ մի քանի խումբեր էին հաւաքվել. Պարնել մի ճառ արտասանեց, որով պահանջեց Ֆերմերներին արտաքսել դադարեցնելը և Ֆօրստերի հրաժարականը, որի վարչական եղանակը իրլանդացիների համբերութիւնը կտրեց. Խօսեցին նոյնպէս իրլանդացի մի քանի այլ պատգամաւորներ, որոնք սաստիկ պախարակում էին Իրլանդիայի մէջ գործադրվող արտաքոյ կարգի միջոցները. Նրանց կարծիքով անհրաժեշտ է դադարեցնել Ֆերմերներին արտաքսելը և ազատել բանից իրլանդական միութեան կալանաւորված անդամներին.

Նոյնը օրը Պարնելի քոյրը մի ճառ արտասանեց Իրլանդիայի մէջ, բազմամարդ ժողովի առաջ.

„Daily News“ լրագիրը խորհուրդ է տալիս կառավարութեանը դադարեցնել Ֆերմերների արտաքսելը, որպէս զի Իրլանդիայի մէջ ապստամբութիւն չը ծագի.

Մի ասոիճանաւորի վրա, որ կամենում էր արտաքսել Ֆերմերին Իրլանդիայի կոմսութիւններից մէկում, մի քանի կանայք յարձակվեցան. Ասոիճանաւորը հանեց իր ռէվոլվերը և ուզեց նրան մի կնոջ վրա. Այդ ժամանակ նրա վրա յարձակվեցան բազմաթիւ կանայք, խլեցին նրա ռէվոլվերը, արձակեցին օդի մէջ, հանեցին ասոիճանաւորի շորերը և կատարելապէս մերկացրած նրան թողին փողոցի մէջ ընկած.

Անգլիական լրագիրները հաղորդում են, որ ռուսաց կառավարութիւնը մտադիր է Եւրոպայի մայրաքաղաքների մէջ պոլիցիական կայարաններ հիմնել յեղափոխականների վրա հսկելու համար. Ժենեվի մէջ պոլիցիական չորս գործակատարներ կը լինեն և երկու ծառայողներ. Նոյնանման կայարաններ կը հիմնվեն Լօնդօնի, Փարիզի, Վիէննայի, Բերլինի և Հռոմի մէջ.

ԲՈԼԳԱՐԻԱ

Բոլգարիայի մէջ կատարվող անցքերը դրաւում են պետութիւնների ուշադրութիւնը, որոնք արդէն բանակցում են իրանց այն ընթացքի առիթով, որ նրանք պէտք է բռնեն, եթէ իշխան Ալէքսանդր հրաժարվի բոլգարական գահից. Բ. Դուռը այդ բանակցութիւններին չէ մասնակցում. „Times“ լրագրի տեղեկութիւնների համեմատ, պետութիւնների մէջ այն համոզմունքն է տիրապետում, որ պէտք է ազատութիւն տալ բոլգարացիներին իրանց ներքին գործերի վերաբերութեամբ, քանի որ նրանք չեն խանդարի Բերլինի դաշնագրով որոշված սահմանները.

Լօնդօնի լրագիրները հաղորդում են, որ Ֆիլիպպօպոլից հասաւ Սոֆիա բոլգարական էդզարխոսը և անուանի բոլգարացիներից ժողով կազմեց, որ պէտք է քննէր գանազան միջոցներ իշխանին ժողովրդի հետ հաշտեցնելու և համաձայնութիւն կայացնելու համար. Էդզարխոսի ձեռնարկած գործի ամբողջութիւնը կասկածելի է.

Եթէ իշխան Ալէքսանդր հրաժարվի բոլգարական գահից, նրան կը յաջորդէ Դանիայի թագաւորի փոքր որդի իշխան Վոլդեմարը, որի եղբայրը յունական թագաւոր է, քոյրերից մէկը Ռուսաստանի կայսրուհի, իսկ միւսը Ուելսի իշխանուհի Ակներև է, որ իշխան Վոլդեմար մեծ պաշտպանութիւն կը գտնի. կարծում են, որ իշխան Ալէքսանդր ուրախութեամբ կը հեռանայ Բոլգարիայից, եթէ կը համոզվի, որ բոլգարացիները անտարբեր են մնում դէպի նրա հրաժարականը. Այս դէպքում օտար պետութիւնները կառաջարկեն իշխան Վոլդեմարին.

Բոլգարական նախկին մինիստր Ցանկովի նամակ գրեց ռուսաց հաւատարմատարին Սոֆիայի մէջ, որով նա մեղադրում է իշխան Ալէքսանդրին սահմանադրութիւնը խախտելու մէջ։ Ռուսաց հաւատարմատարը այդ նամակը յանձնեց բոլգարական կառավարութեանը, առաջարկելով դատաստանի ենթարկել Ցանկովին։

Օրէնսդրական ժողովի անդամների ընտրութիւնները նշանակված են յունիսի 27-ին, որպէս զի իշխանը միջոց ունենայ վերջացնել իր ճանապարհորդութիւնը Բոլգարիայի մէջ։

Զագրեբի ակադեմիայի ուսանողները 170 ստորագրութիւններով ծածկված մի նամակ ուղարկեցին նախկին մինիստր Կարավելովին, որի մէջ յայտնում են, թէ բոլգարացիները պէտք է բոլոր միջոցները գործ դնեն և մինչև անգամ իրանց կեանքը զոհեն ձեռք բերած իրաւունքները պահպանելու համար։ Սերբիական մի քանի պատգամաւորներ էլ այդպիսի նամակներ ուղարկեցին։ Բերկացի նահանգի բնակիչները արտաքսեցին կառավարչական զորձակատարին։ Բոլգարիայի մէջ պատերազմական դրութիւն է յայտնված։ Վիդդինի պրոկուրորը կալանաւորված է։ Առհասարակ գործերի դրութիւնը չափազանց անհանգստացնող է։

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիական մամուլը զբաղված է վիճաբանութիւններով ընտրողական նոր օրէնքի հարցով և քննում է սենատի բռնած ընթացքը պատգամաւորների ժողովի վճռի վերաբերութեամբ։ Արդեօք Ֆրանսիական սենատը իրաւունք ունի՞ փոխել պատգամաւորների ժողովի այն վճիռը, որ վերաբերում է պատգամաւորների ընտրութեանը։ Ոչ ոք չէ հերքում, որ սենատը իրաւունք ունի իր հասկացողութեան համեմատ գնահատել պատգամաւորների ժողովի ներկայացրած օրինագիծները, բայց այս անգամ սենատը բարոյապէս իրաւունք չունի փոխել պատգամաւորների ժողովի վճիռը։ Սենատի ընդդիմադրութեան դէմ այդ հարցի վերաբերութեամբ Գամբետտայի կուսակիցները ասում են, որ փատաղաւոր է երկու ժողովների մէջ թշնամութիւն յարուցանել և որ կարող է հարց ծագել բոլորովին ոչնչացնել սենատը իբրև մի հիմնարկութիւն, որ սահմանափակում է ժողովրդի ներկայացուցիչների ազատութիւնը։

Գամբետտայի „République Française“ լրագիրը համառօտութեամբ երկու ճանապարհ է ցոյց տալիս սենատօրներին. կամ հաստատել պատգամաւորների ժողովի վճիռը, կամ հաշտվել սենատը ոչնչացնելու մաքի հետ։ Այսպիսի յօդուածները աւելի էլ կարող են զայրացնել սենատին և դրդել նրան պահպանել իր հեղինակութիւնը, չը նայելով զանազան սպառնալիքներին։ Ակներև է, որ Գամբետտայի բարեկամները իրանց համար անաջողութիւն են պատրաստում իրանց չափազանց մեծ եռանդով։ Եթէ սենատը իրաւունք չունի հաստատել կամ մերժել պատգամաւորների ժողովի ընդունած օրինագիծը, ուրեմն սենատի գոյութիւնը աւելորդ է։ Սենատը իսկապէս հիմնված է իբրև օրէնսդրական երկրորդ խորհուրդ օրէնքներ վերաքննելու համար և, եթէ նա չը կատարէր իր այդ կոչումը և բաւականանար միայն հաստատելով զանազան օրինագիծները առանց նրանց փոփոխելու, այն ժամանակ նա կապացուցանէր իր գոյութեան ապարդիւն լինելը։ Այս անգամ սենատը աւելի էլ մեծ կասկածանքով կարող է վերաբերվել պատգամաւորների ժողովի վճռին, որովհետև նրան նպաստել են հանրապետականների և բոնապարեանների զանազան խումբեր, որոնք միմեանց հետ շատ քիչ համերաշխ են։

Հանրապետութեան շահերին նայելով, աւելի լաւ կը լինէր հրաժարվել ընտրողական ձևի փոփոխելուց, քանի որ այդ փոփոխութիւնը պէտք է ձեռք բերել հանրապետականների անհամաձայնութեան զբնով։ Ինչպէս երևում է, ֆրանսիական սենատը աւելի մեծ նշանակութիւն է տալիս հանրապետութեան նախագահ Գրեվիի կարծիքին ընտրողական հարցի վերաբերութեամբ։

Նորերումս ֆրանսիական կառավարութիւնը նախազգուշացրեց պապին, որ նա յետ կը կանչի իր ներկայացուցչին Վատիկանից, եթէ հոգևորականները ֆրանսիայի մէջ կը խառնվին ընտրութիւնների մէջ և զանազան ցոյցեր կանեն։

Տունիսից ստացված տեղեկութիւններից երևում է, որ բէյը մեծ պատրաստակամութեամբ կատարում է ֆրանսիացիների ցանկութիւնը։ Գրեվի, տեղեկանալով, որ բէյը մտադիր է մի դեսպան ուղարկել Փարիզ, յայտնեց նրան, որ ֆրանսիական կառավարութիւնը մեծ ուրախութեամբ կընդունի Տունիսի դեսպանին։

ԹՈՒՐՔԻԱ

Միհադ-փաշային կալանաւորելու մասին հաղորդում են հետևեալ տեղեկութիւնները։ Ինչպէս յայտնվում է, Միհադ-փաշան չը յանձնվեցաւ Թուրքաց իշխանութեանը Ֆրանսիական հիւպատոսից, այլ Ֆրանսիական դեսպանատան վճիռը իմանալուց առաջ նա ցանկութիւն յայտնեց թողնել հիւպատոսարանը։ Միհադ-փաշա վարվեցաւ այդպէս Թուրքաց արդարութեան մինիստրի հետևեալ հեռագրից դրդված. „Ես չէի հաւատայ այն լուրին, որ դուք ծածկվել էք Ֆրանսիական հիւպատոսի մօտ, եթէ նա պաշտօնապէս չը ստացվէր։ Դուք յայտնում էք, որ կը ներկայանաք Կ. Պոլիս դատարանին այն պայմանով, որ պետութիւնների հովանաւորութեան տակ լինէք։ Ձեզ պէտք է յայտնի լինի, որ անկարելի է հովանաւորել յանցանքի մէջ մեղադրված մի անձի։ Մեր դատարանները յայտնի են իրանց արդարութեամբ և անկողմնապահութեամբ։“

Ֆրանսիական հիւպատոսը մինչև անգամ իրաւունք չունէր յանձնել Միհադին Թուրքաց իշխանութեանը, որովհետև նրա ծածկվելուց յետոյ բոլոր հիւպատոսները մի պրօտոկոլ էին կազմել և յայտնել էին, թէ Միհադ-փաշա ժամանակաւորապէս բոլոր հիւպատոսների հովանաւորութեան տակ է գտնվում։

Քիւրդերի շէյխ Իբադուլլահ մի շրջաբերականով հրաւիրել է Դիարբեքիրի քիւրդերին պատերազմել Պարսկաստանի դէմ, ասելով, թէ Բ. Դուռը այդ բանը ցանկանում է։ Դիարբեքիրի պաշտօնական լրագիրը բողոքեց դրա դէմ, ասելով, թէ Բ. Դրան և Պարսկաստանի յարաբերութիւնները այժմ ամենարարեկամական են և թէ սասիկ կը պատժվեն նրանք, որոնք կը կատարեն շէյխի հրաւէրը։

„Standard“ լրագրին հաղորդում են, որ Եանինայի նահանգապետի հրաւէրը ալբանցիներին՝ Յունաստանին ընդդիմադրելու համար այն նպատակով էր արված, որ կալանաւորվեն ալբանական շարժման առաջնորդները։ Այդ խորամանկութիւնը աջողվեցաւ և այժմ 10 ալբանցի առաջնորդներ կալանաւորված են Պրեվիզայի բանտի մէջ։ Ասում են, որ Եանինայի նահանգապետի խորամանկ միջոցը մեծ հարուած հասցրեց ալբանցիներին, որոնց այժմ սարսափ է տիրել։

Աւազակութիւնները Սալօնիկի շրջականերում, Էպիրոսի և Թէսալիայի մէջ, հետզհետէ սաստկանում են։ Նորերումս 150 մարդուց կազմված աւազակների մի խումբ մօտեցաւ Էպիրոսի գիւղերից մէկին։ Աւազակապետը, որ մի կին է եղել, մտաւ գիւղը և պահանջեց գիւղացիներից պաշարներ իր զօրքերի համար։ Գիւղացիները, աւազակներին կանօնաւոր զօրքերի տեղ ընդունելով, շտապեցին կատարել այդ պահանջը, իսկ աւազակները շրջապատեցին նրանց, կողոպտեցին և պատանդ վերցրին չորս տղամարդ և չորս կինարմատ, որոնց համար 20,000 Թուրքաց լիրա վարձատրութիւն են պահանջում։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պոլսից հեռագրում են «Daily News» լրագրին որ սուլթանը նշանակել է մի յանձնաժողով որ պէտք է մշակի բէֆորմների ծրագիրը, համաձայն Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածին, որ պարտաւորում է իր մէջ Հայաստանի վարչութեան հիմքը։ Կառավարութիւնը դիտաւորութիւն ունի ներկայացնել այդ պրօէկտը եւրոպական պետութիւնների քննութեանը և այդպիսով յանձն առնել վերանորոգութիւնները մտցնելու ինիցիատիվը։ Կարծում են, մինչև անգամ, որ Բ. Դուռը կը հրատարակի մի պրօկլամացիա գաւառական հիմնարկութիւնների բէֆորմների մասին, առհասարակ, և այդպիսով եւրոպական պետութիւնների միջամտութեանն առաջ կառնի։

—«Gazette de Lausanne» հաղորդում է որ Ցիւրիխ կանտոնի կառավարութիւնը արգելել է գումարել Ցիւրիխում սոցիալիստների միջազգային ժողով, որ լինելու էր սեպտեմբեր ամսին։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բրիւսել քաղաքի մէկ ազնուական, որպէս garde civique-ի անդամ, մասնակցելով պալատական վերջին ուսանողութիւններին վիճնայում, հետևեալն էր պատմում մինիստրների խորհրդի նախագահ և Բէլգիայի սիրված պետական անձի՝ Ֆրէր-Օրբանի կեանքից։ 30 տարի առաջ Ֆրէր-Օրբան երիտասարդ պաշտօնեայ էր Ֆինանսների մինիստրութեան մէջ, և իր ընդունակութիւններով մեծ յոյսեր էր տալիս նա. բայց նրա բոլոր հարստութիւնը յոյսերն էին։ Այնու ամենայնիւ, նա այնքան համարձակ էր, որ աչք բարձրացրեց մէկ հարուստ և հպարտ ազնուական ընտանիքի աղջկայ վրա։ Նամուսուն։ Այդպիսի ցանկութեան անյուսալի լինելը հասկանալի էր ամենքին, որովհետև ֆլամանդացի գառոզ ազնուականը այնքան չէր ստորանայ, որ իր աղջկայ ձեռքը տար մի որ և է գիւղացի պաշտօնեայի։ Բայց Ֆրէր-Օրբանի սրտի ընտրելին բաւական մեծ խելք և համարձակութիւն ունէր և վճռեց ինքն յաղթել այն բոլոր դժուարութիւններին, որոնք արգելաւոր էին լինում իրանց բաղդին։ Մի անգամ աղջիկը նամակով հրաւիրեց Ֆրէր-Օրբանին մտնել երեկոյեան թատրօնական ներկայացման ժամանակ, իր ծանոթների լօժան։ Երբ երիտասարդ մարդը եկաւ, աղջիկը կանգնեց, մօտեցաւ նրան, գրկեց և համբուրեց նրան բոլոր հասարակութեան առաջը, չը նայելով իր ծնողների սարսափին և զարմանքին։ Ինքն իրան հասկանալի է, որ այս տեսարանը իր ազդեցութիւնն ունեցաւ։ այդպիսի սկանդալից յետոյ ծնողների կողմից այլ ևս ոչ մի ընդդիմադրութիւն չէր կարող լինել, և սիրահարների նշանվելը հէնց նոյն երեկոյ կատարվեցաւ։ Այդիսով տիկին Ֆրէր-Օրբան կատարելապէս տիրապետեց իր մարդուն։ Յոյսերը, այնու ամենայնիւ, ի զուր չանցան. այժմեան միտրը արագ բարձրանում էր հասարակական սանդուղքի մէկ աստիճանից դէպի միւսը. չնորհիւ իր ճարտարախօսութեան, հաստատ բնաւորութեան և անչեղ դեմոկրատական ուղղութեան, Ֆրէր-Օրբան, բէլգիական ժողովրդի սիրելի առաջնորդը դարձաւ։ Ֆրէր-Օրբանի անունը ոսկէ տառերով է գրված Բէլգիայի պարլամենտական պատմութեան ժամանակագրութեան մէջ. նրա փառքը մինչև անգամ իր հայրենիքի սահմաններից դուրս էլ տարածվեցաւ։

* *
*

Մէկ տիկին Ամերիկայում, կամենալով անուն ստանալ, բժիշկ Ցանեէրի նման, վճռեց քառասուն օր լռել։ Իր այդ դիտաւորութիւնը նա առաւօտեան 9 ժամից սկսեց և երեք օր շարունակ քաջութեամբ տարաւ այդ լռութիւնը։ Չորրորդ օրը նրա երակը սկսեց աւելի թոյլ խփել, շնչառութիւնը կարճացաւ։ Հրաւիրված բժիշկը յայտնեց, որ հիւանդի կեանքին վտանգ է սպառնում, եթէ նա չընդհատի իր լռութիւնը։ Բժշկի խօսքը և ծնողների աղաչանքը նրա վրա չազդեցին։ Նա շարունակեց կամակոր լռութիւն պահպանել։ Երկիւղը նրա կեանքի մասին աւելի և աւելի մեծացաւ։ Վերջապէս, հօթերորդ օրը նրա ծանօթներից մէկի գլխում մի բաղդաւոր միտք ծագեցաւ։ Նա սկսեց նրա ներկայութեամբ նրան յայտնի զանազան դէպքեր պատմել և ամեն կերպ ազատաղում էր նրանց։ Այդպիսի լիբը ստախօսութիւնը վրդովեց հերոսուհուն, որը յանկարծ բացեց լեզուն և տասը ժամ շարունակ խօսում էր առանց հանգստանալու։ Այդպիսով նրա վճիռը ցանկացած եղրակացութիւններին չը հասաւ։

* *
*

«Figaro» լրագիրը գերմանացիների մայրաքաղաքի տեղափոխութեան դիտաւորութիւնը Ֆրանկֆուրտ Մայնի վրա արդէն փաստ համարելով, պատմում է այդ առիթով հետևեալ անէկդոտը. մէկ պրուսական օֆիցէր Նորերումս Ֆրանկֆուրտի մայր եկեղեցին այցելեց։ Եկեղեցական սպասաւորը, ցոյց տալով նրան հնութեան զանազան յիշատակներ, նրա ուշադրութիւնը դարձրեց արծաթեայ մկան վրա, որ ընծայված էր տաճարին ուխտադրութեամբ։ Օֆիցէրի հարցմունքին արծաթեայ մկան խորհրդաւոր նշանակութեան մասին, սպասաւորը ասաց նրան, որ հնում անցեալում, երբ բոլոր Ֆրանկֆուրտը կատարելապէս լցված էր մկների խմբերով և ոչնչով չը կարողացան օգնել այդ թշուառութեանը, ոչ հարիւրաւոր կատուներ և բուլդոգներ, ոչ էլ գէնքերը, այն ժամանակ մէկ աստուածապաշտ կին բերեց տաճարը, ուխտադրութեամբ, այս արծաթեայ մուկը. և միւս օրը բոլոր մկները կորան։ Պրուսական օֆիցէրը բարձր ձայնով սկսեց ծիծաղել։ «Մինչ Ֆրանկֆուրտցիները այնքան պարզամիտ են, որ այդպիսի յիմարութիւններ պատմում են և հաւատում են նրանց», ծիծաղելով ասաց օֆիցէրը։—«Մենք պատմում ենք, պատասխանեց եկեղեցական սպասաւորը և չենք հաւատում, որովհետև, եթէ հաւատալիս լինէինք, վաղուց արդէն ուխտադրութեամբ կընծայէինք Մ. Ատուածածնուն արծաթեայ պրուսացուն։»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԱՍՆԱՒՈՐ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻՑ

ՄՈՍԿՎԱ, 9 յունիսի։ Ձեր լրագրի 98 համարի մէջ տպված լուրը կաթողիկոսի վատնգաւոր հիւանդութեան մասին խոր տպաւորութիւն է գործել այստեղի հայերի վրա։ „Մշակի“ առաջարկութեան համեմատ դիտաւորութիւն կայ այստեղից էլ պատգամաւորութիւն ուղարկել Էջմիածին։ Հասարակութիւնը պահանջում է կաթողիկոսի առողջութեան մասին բիւլետեններ։

ԵՐԵՒԱՆ, 9 յունիսի։ Վանից եկած տեղեկութիւնները այսօր որպէս հաստատ հաղորդեցին, որ շէյխ Իբրահիմ կալանաւորված է և պահվում է Վանի բերդում։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 յունիսի։ Երէկ իշխան Միլան ճանապարհ ընկաւ Պետերբուրգից դէպի Վիէննա, իսկ կոմս Միլիւտին—Խրիմ։

ՍՕՖԻԱ, 8 յունիսի։ Բոլգարական 99 գիւղերի բնակիչները քահանաների ներկայութեամբ երդվեցին սահմանադրութիւնը պաշտպանել։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 յունիսի։ Պաշտօնապէս հրամայված է սպի բոլոր նշանները փոխարինել, կրելով արմուկից բարձր ձախ ձեռքի վրա սև կապ, երկու վերշոկ լայնութիւն ունեցող հարթ բանտով։

ՄԱՐՍԷԼ, 8 յունիսի։ Այստեղ արիւնահեղ կռիւներ պատահեցան Ֆրանսիացիների և իտալացիների մէջ. սպանված են 8, վիրաւորված են 23 մարդիկ, բանտարկված են 65 անձինք։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ